ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

« ՀՀ ԳՄ-ԳՀԱՊՁԲ-18/11» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստի

Գավառ, Կենտրոնական հրապարակ 7 **«14» «02» 2018թ.**
ժ 15:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ Յուրա Մուշեղյան /ԳԱՊ/,
Հանձնաժողովի անդամներ Արմեն Զոհրաբյան /ԲԱ/, Գևորգ Խաչատրյան/ԳԱ/,Վալեր Հոդաբաշյան/ԲԱ/,Գուրգեն Մելքոնյան/ԳԱ/
Հանձնաժողովի քարտուղար՝ Արթուր Բաղեյան/ՄՀՄ/

1. **Գնահատող հանձնաժողովը որոշեց.**

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 46-րդ կետի դրույթներով՝

- <<Լիդեր Քոմփանի>> ՍՊԸ-ի, <<Մեծ Ծիածան>> ՍՊԸ-ի, <<ԼԵՅԿՈԱԼԵՔՍ>> ՍՊԸ-ի, <<Հիդրո Գրուպ>> ՍՊԸ-ի և <<ՌԵԱՔԻՄ>> ՍՊԸ-ի ՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ ներկայացրած հայտարարությունը՝ համարել իրականությանը համապատասխանող և հիմք ընդունելով հրավերով նախատեսված ապրանքների տեխնիկական բնութագրերը ՝

- << Լիդեր Քոմփանի >> ՍՊԸ-ին ճանաչել ընտրված մասնակից 14-րդ, 16-րդ և 17-րդ չափաբաժիններով, <<Մեծ Ծիածան>> ՍՊԸ-ին ճանաչել ընտրված մասնակից 3-րդ, 5-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ, 13-րդ և 15-րդ չափաբաժիններով, <<Լեյկոալեքս>> ՍՊԸ-ին ճանաչել ընտրված մասնակից 6-րդ չափաբաժնով, <<Հիդրո Գրուպ>> ՍՊԸ-ին ճանաչել ընտրված մասնակից 2-րդ և 11-րդ չափաբաժիններով, <<ՌԵԱՔԻՄ>> ՍՊԸ-ին ճանաչել ընտրված մասնակից 1-ին, 4-րդ, 12-րդ և 18-րդ չափաբաժիններով.

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

2. **Գնահատող հանձնաժողովը որոշեց**

Հաշվի առնելով այն հանգամանքը , որ գնման ընթացակարգին հայտ է ներկայացրել մեկից ավելի մասնակից, ուստի հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի պահանջները ՝ հրապարակել հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին, անգործության ժամկետ սահմանելով սույն հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը

Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվելու գործընթաց սկսել սույն հայտարարությամբ սահմանված անգործության ժամկետի ավարտից՝ 20.02.2018թ. հետո

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

3. **Գնահատող հանձնաժողովը որոշեց**

Գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու օրը, ժամը 12:00-ին, ք. Գավառ, Կենտրոնական հրապարակ 7, Մարզպետարանի վարչական շենք, N 212 աշխատասենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Նախագահ՝ _____ Յու. Մուշեղյան

Անդամներ՝ _____ Ա. Զոհրաբյան

_____ Գ Խաչատրյան

_____ Վ. Հոդաբաշյան

_____ Գ Մելքոնյան

Քարտուղար՝ _____ Ա Բաղեյան